

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ  
ՉԵԶՈՔ ՍԵՈՒԻ ԲԱՅԵՐԻ ԿՈՉԱԿԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ**

**ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ԼԱԼԱ ԳՐՔԻԿՅԱՆ**

Հոդվածում ուսումնասիրվող թեման վերաբերում է շարահյուսության հիմնական հասկացություններից մեկի՝ շարահյուսական կապակցության բաղադրիչների, մասնավորապես ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի կապակցական հնարավորություններին:

Ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի կապակցելիական հնարավորությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ենթակաառությունից, ստորոգառությունից, խնդրառությունից և պարագաառությունից բացի՝ այդ բայերին հատուկ է նաև կոչականառությունը, որը, որպես արժույթի արտահայտություն, դրսևորվում է միայն նախադասության կազմում: Բանն այն է՝ կոչականառությունն անմիջականորեն կապ ունի ստորոգման քերականական ակտի հետ: Կոչականառությունն իրականանում է դիմավոր բայի միջոցով կամ նրա պարտադիր մասնակցությամբ և միայն ուղղակիորեն մեջբերվող խոսքի սահմաններում: Սակայն չեզոք սեռի ոչ բոլոր բայաձևերն են կոչականառու, կոչականառության հարցում էական դեր ունի բայիմաստը, այսինքն՝ այն, թե այս կամ այն բայի ցույց տված գործողությունը առարկա ցույց տվող բառերի դասային ո՛ր խմբ(եր)ին կարող է վերաբերել:

Կոչական կարող են ստանալ այն չեզոք սեռի բայերը, որոնք անդիմասահմանափակ են, սակայն կոչականառությունը հատուկ է հիմնականում անձնանիշ առարկաներին կապակցվելու հնարավորություն ունեցող չեզոք սեռի բայերին: Վերջիններիս մեծ մասը կարող է կապակցվել թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվով կոչականի, և միայն սահմանափակ թվով բայեր են, որ ստանում են կա մ միայն եզակի, կա մ միայն հոգնակի թվով կոչական: Կոչականառությամբ օժտված անդիմասահմանափակ բայերը կապակցման ընթացքում հանդես են բերում դիմային սահմանափակություն. կոչական են առնում ոչ թե բոլոր, այլ միայն եզակի և հոգնակի թվերի 2-րդ դիմային ձևերով արտահայտված բայաձևերը:

Սույն հետազոտությամբ նպատակ է հետապնդվում ուսումնասիրելու ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի կոչականառության արժույթը, որն առ այսօր ուսումնասիրության առարկա չի դարձել: Ուսումնասիրությունը հնարավորություն կտա առավել ամբողջական պատկերացում կազմելու հայերենի չեզոք սեռի բայերի կապակցելիական հնարավորությունների, այսինքն՝ արժույթի մասին, որով էլ պայմանավորված է մեր հետազոտության արդիականությունը:

**Բանալի բառեր** - արժույթ, անանցողական բայեր, համաձայնություն, անձնանիշ (իրանիշ, կենդանանիշ) առարկաներին կապակցվող բայեր, կապակցելիություն

**Ներածություն:** Շարահյուսական արժույթն առաջինն ուսումնասիրել է Լ. Տենիերը, որը քննության է ենթարկել բայի ենթակաառության և ինդրառության հարցեր<sup>1</sup>: Հետագայում թեև տարբեր լեզվաբանների կողմից ուսումնասիրվել են՝ ա) բայի արժույթի այլ դրսևորումներ (ստորագառություն, պարագաառություն) ևս<sup>2</sup>, բ) այլ խոսքի մասերի արժույթին վերաբերող և հարակից այլ հարցեր<sup>3</sup> և այլն, այնուամենայնիվ բայի և կոչականի քերականական կապը դուրս է մնացել արժույթի ուսումնասիրությամբ զբաղվող լեզվաբանների տեսադաշտից: Ասվածը պայմանավորված է նրանով, որ ժամանակակից լեզվաբանության մեջ կոչականի նախադասության անդամ լինել-չլինելու հարցում գիտնականների մոտեցումները տարբեր են: Դա արտացոլվել է նաև հայ լեզվաբանների քերականագիտական աշխատություններում, որոնցում ավանդաբար տիրապետող է եղել այն կարծիքը, թե կոչականը նախադասության անդամ չէ: Դրանով է պայմանավորված այն, որ թե՛ մենագրություններում և թե՛ բուհական ու դպրոցական դասագրքերում կոչականն առ այսօր ուսումնասիրվում է պարզ նախադասության կազմից դուրս՝ նախադասության հարակից անդամների շարքում: Սակայն նոր չէ նաև այն մոտեցումը, ըստ որի՝ առանձնացվում է կոչականի երկու տեսակ, և դրանցից մեկը համարվում է նախադասության անդամ: Մ. Աբեղյանի կողմից առաջ քաշվելով դեռևս 20-րդ դարասկզբին<sup>4</sup> այս մոտեցումը հայերենագիտության մեջ քննության առարկա է մինչ օրս<sup>5</sup>: Ըստ գիտնականի՝ նախադասության մեջ կոչական է «այն անձը, կամ իբրև անձ մտածված ամեն ինչ, որի անունը տալով՝ ձայնում, կանչում ենք մի բան ասելու կամ հարցնելու համար»<sup>6</sup>: Անդրադառնալով խոսքի մեջ կոչականի ունեցած դերին՝ Մ. Աբեղյանը նշում է, որ եթե բայը 1-ին կամ 3-րդ դեմքով է գործածված, ապա «կոչականը մնում է խոսքի կապակցությունից դուրս և ցույց է տալիս մի առարկա, որին դիմում է խոտողը», իսկ եթե 2-րդ դեմքով, ապա կոչականը «բացահայտիչ է ենթա-

<sup>1</sup> Տենիեր Լ. **Tesnière**, *Éléments de syntaxe structurale*, Paris, 1959, էջ 238-282:

<sup>2</sup> Տենիեր Գ. **Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 469-487:

<sup>3</sup> Տենիեր Ծ. **Атаян**, Предмет и основные понятия структурального синтаксиса. Ер., 1968, էջ 66-67, **В. Белошапкова**, **Е. Земская**, **И. Милославский**, **М. Панов**, Современный русский язык. М., 1981, էջ 210, **Т. Морозова**, Синтаксические свойства глагола и его словообразовательный потенциал. М., 1984, էջ 82:

<sup>4</sup> Տենիեր Մ. **Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 410:

<sup>5</sup> Տենիեր Վ. **Առաքելյան**, Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Եր., 1958, էջ 416: **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 199, 370: **Մ. Աբրահամյան**, **Ն. Պառնասյան**, **Հ. Օհանյան**, **Խ. Բաղդիկյան**, Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն, հ. 3, Եր., 1976, էջ 294: **Ռ. Իշխանյան**, Արդի հայերենի շարահյուսություն, Եր., 1986, էջ 279-281: **Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզու: Շարահյուսություն: Պարզ նախադասություն, Եր., 1987, էջ 317: **Խ. Բաղդիկյան**, Կոչականը ժամանակակից հայերենում, Եր., 1982, էջ 3-138: **Ա. Պապոյան**, **Խ. Բաղդիկյան**, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն: Ուսումնական ձեռնարկ, Եր., 2003, էջ 183-194:

<sup>6</sup> Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 410:

կայի, արտահայտված լինի ենթական դերանունով, թե ոչ»<sup>7</sup>: Ի լրումն Մ. Աբեղյանի՝ կոչականին տրված այս սպառիչ բնութագրի՝ անհրաժեշտություն է զգացվում անդրադառնալու կոչականի՝ հատկապես նախադասության երկրորդական անդամներին կապակցման քերականական և, այսպես կոչված, խորքային եղանակներին: Բանն այն է՝ կոչականը կապի մեջ է պարզ նախադասության ոչ միայն ստորոգյալի, այլև նրա հետ ինդրային և պարագայական հարաբերության մեջ գտնվող այլ անդամների (2-րդ դեմքի ստորոգմամբ նախադասությունների մեջ նաև ենթակայի) հետ: Ավելին՝ կոչականը նախադասության տարբեր անդամների հետ իմաստային և քերականական կապի մեջ կարող է գտնվել հեղինակի խոսքում ևս<sup>8</sup>: Կարևորենք, որ նշված բոլոր դեպքերում կապակցումը տեղի է ունենում թվի քերականական կարգի համաձայնության եղանակով<sup>9</sup>: Համեմատենք, օրինակ, ուղղակիորեն մեջբերվող խոսքով հետևյալ նախադասությունները.

1. – *Մամվե չ, դու պիտի օգնես ինձ*, – ասաց նա *որդուն*։
2. – *Մամվե չ*, ես *քեզ* հավատում եմ, – ասաց նա *որդուն*։
3. – *Մամվե չ, քո քույրը քեզնից* խուսափում է, – ասաց նա *որդուն*։

1-ին նախադասության ուղղակի խոսքն արտահայտված է 2-րդ դեմքի ստորոգյալով: Թվի քերականական կարգով համաձայնել են ուղղակիորեն մեջբերվող խոսքի ենթական, կոչականը, ստորոգյալը և հեղինակի խոսքի հանգման (հաղորդման) խնդիրը:

2-րդ նախադասության ուղղակի խոսքն արտահայտված է 1-ին դեմքի ստորոգյալով: Թվի քերականական կարգով համաձայնել են ուղղակիորեն մեջբերվող խոսքի կոչականը, ուղիղ խնդիրը և հեղինակի խոսքի հանգման (հաղորդման) խնդիրը:

3-րդ նախադասության ուղղակի խոսքն արտահայտված է 3-րդ դեմքի ստորոգյալով: Թվի քերականական կարգով համաձայնել են ուղղակիորեն մեջբերվող խոսքի կոչականը, հատկացուցիչը, անջատման խնդիրը և հեղինակի խոսքի հանգման (հաղորդման) խնդիրը:

Վերոնշյալ երեք նախադասությունների քննությունից պարզ է դառնում, որ՝

ա) կոչական ունեցող նախադասությունը գործածվում է միայն որ-

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Տե՛ս **Գ. Խաչատրյան**, Կոչականառությունը որպես բայի արժույթի արտահայտություն ժամանակակից հայերենում // Լեզու և լեզվաբանություն, 2016, № 1, էջ 7: Այսպես ստորև բերվող կառուցում եզակի թվով համաձայնում են ուղղակիորեն մեջբերվող խոսքի *բալաս* կոչականն ու հեղինակի խոսքի *ինձ* հաղորդման խնդիրը.

Պապս փոշոտ գլխարկը թափ տվեց ու դարձավ *ինձ*.

— Ձին պահի, *բալաս...* Պատասխանը չկա (այս և հետագա օրինակները քաղված են հայ դասական և ժամանակակից գրողների ստեղծագործություններից):

Մինչդեռ հետևյալ խոսքային հատվածում *տղանե՛ք* կոչականն ու *մեզ* հաղորդման խնդիրը համաձայնում են հոգնակի թվով.

— *Տղանե՛ք*, — *մեզ* դարձավ Լևոնյանը, — նստեք, մի բան պատմեմ:

<sup>9</sup> Տե՛ս **Գ. Խաչատրյան**, Կոչականը ժամանակակից հայերենում // Լեզու և լեզվաբանություն, 2006, № 1, էջ 3-24:

պես ուղղակի խոսք, որին սովորաբար զուգորդվում է հեղինակի նախադաս, միջադաս կամ վերջադաս խոսքը<sup>10</sup>:

բ) Կոչականի և ստորոգյալի կապակցությունը, ինչպես հայտնի է, տեղի է ունենում միայն 2-րդ դեմքով արտահայտվող նախադասություններում, որն էլ *հենց բայի կոչականատության արժույթի վկայությունն է*:

գ) Կոչականը թվի քերականական կարգով համաձայնում է ոչ միայն 2-րդ դեմքով արտահայտված ստորոգյալին, այլև նախադասության այլ անդամներին:

դ) Կոչականը դերանվամբ արտահայտված ենթակայի հետ ցույց է տալիս միևնույն անձը և ենթակային ևս համաձայնում է միայն 2-րդ դեմքով արտահայտվող նախադասություններում:

Կոչականի՝ որպես բայի ակտանտի, իսկ կոչականատության՝ որպես բայի արժույթի արտահայտության մասին առաջին դիտարկումները կատարել է սույն հոդվածի համահեղինակ Գ. Խաչատրյանը հին հայերենի վերլուծական բայերի արժույթի ուսումնասիրության շրջանակներում<sup>11</sup>, հետագայում կարևորելով նաև, որ բայի կոչականատությունն անմիջականորեն առնչվում է անձանիշ գոյականներին<sup>12</sup>: Ի տարբերություն խնդրատության և պարագատության՝ բայի կոչականատությունը դրսևորվում է միայն նախադասության կազմում, քանի որ այն անմիջականորեն կապ ունի ստորոգման քերականական ակտի հետ: Կոչականատությունն իրականանում է միայն դիմավոր բայի միջոցով կամ նրա պարտադիր մասնակցությամբ<sup>13</sup>: Նույնը վերաբերում է նաև բայի ենթակատությանը և ստորոգատությանը, սակայն կոչականատությունը հանդես է գալիս միայն ուղղակիորեն մեջբերվող խոսքի սահմաններում<sup>14</sup>: Ժամանակակից հայերենի բայի կոչականատությանն անդրադարձ ունի Ս. Մուրադյանը, որը, սակայն, քննության է առել անցողական բայերի կոչականատությունը<sup>15</sup>:

**Տեսական հիմքեր, մեթոդներ և նյութեր:** Հաշվի առնելով վերոնշյալ տեսական դրույթները և կարևորելով, որ կոչականատությունը բնորոշ է միայն այն բայերին, որոնք կարող են կապակցվել կա մ միայն անձ,

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>11</sup> Տե՛ս Գ. Խաչատրյան, Գրաբարի վերլուծական բայերի արժույթը, Եր., 2000, էջ 13-15:

<sup>12</sup> Տե՛ս Գ. Խաչատրյան, Կոչականատությունը որպես բայի արժույթի արտահայտություն ժամանակակից հայերենում, էջ 11:

<sup>13</sup> Նկատի չունենք այն դեպքերը, երբ կոչականը գործածվում է բայական անդամ նախադասությունների կազմում, ինչպես «... քնե՛լ, բարեկա մս ... ընդունեցե՛ք այս, հանգստացե՛ք, ի՛նչ էք հուզվում»: Առավել մանրամասնորեն տե՛ս Գ. Խաչատրյան, Դիմային հարաբերության արտահայտությունը բայական անդամ նախադասությունների մեջ // Պատմա-բանասիրական հանդես, 1989, № 4, էջ 143-153:

<sup>14</sup> Տե՛ս Գ. Խաչատրյան, Կոչականատությունը որպես բայի արժույթի արտահայտություն ժամանակակից հայերենում, էջ 10-11:

<sup>15</sup> Տե՛ս Ս. Մուրադյան, Ժամանակակից արևելահայերենի անցողական բայերի արժույթը (Ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր), Եր., 2021, էջ 8:

կա՛մ, այլ առարկաներից բացի, նաև անձ ցույց տվող ենթակայի, սույն հոդվածում նպատակ է հետապնդվում՝ ա) ուսումնասիրելու ժամանակակից հայերենի չեզոք սեռի այն բայերը, որոնք, ենթակաառությունից, ստորոգառությունից, խնդրառությունից (կամ պարագաառությունից) բացի, աչքի են ընկնում նաև կոչականառությամբ, բ) դասակարգելու այդ բայերն ըստ իմաստային խմբերի և գ) անդրադառնալու նաև կոչականառությունից գուրկ բայերին:

Առաջադիր նպատակին հասնելու համար ուսումնասիրել ենք ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերը, որոնց թիվը, ըստ մեր հաշվարկների, հասնում է մոտավորապես 5500-ի: Սրանցից մոտ 3500-ը է խոնարհման բայեր են, իսկ ավելի քան 2000-ը՝ ա խոնարհման:

Մեր հետազոտության շրջանակներից դուրս են որպես կոչական գործածվող բառերի փոխաբերական գործածության դեպքերը: Չենք անդրադառնա նաև անձնավորման դեպքերին, քանի որ այս պարագայում առարկա ցույց տվող ցանկացած բառ կարող է գործածվել կոչականի դերով: Վերջին հանգամանքով պայմանավորված՝ առաջիկա շարադրանքում զանց կառնենք այն դեպքերը, երբ՝

ա) կոչականի դերում հանդես է գալիս իրանիշ կամ կենդանանիշ առարկա, որին դիմում են վերջինիս համար բնութագրական գործողությամբ, սակայն այդ պարագայում առկա է ոչ թե երկխոսության փորձ, այլ անձնավորման ոճական հնարք<sup>16</sup>: Օրինակ՝ Ախ, ո՛ւր ես, բլբուլ, ո՛ւր ես, սոխակ, եկ, թռիչք դեպի Լուսիկի բանտի պատուհանը և այնտեղից կրկին հնչեցրու քո երգը, քո անուշ դայլայիկը: Է՛յ կանանչ ախպեր, Է՛յ ճանանչ ախպեր, Արի՛, քեզ հետ բե՛ր Արևի շողեր ... և այլն:

բ) 2-րդ դեմքով արտահայտված և կոչականի դերով հանդես եկող իրանիշ կամ կենդանանիշ առարկային կապակցված ստորոգյալի գործողությունը բնութագրական չէ տվյալ կոչականին, և դարձյալ առկա է անձնավորման ոճական հնարք կամ փոխաբերություն: Օրինակ՝ Դա՛րդըս լացեք, սարի սըմբուլ, Ալվան-ալվան ծաղիկներ: Նազում էս ու շորորում զմրուխտե քո շորերում, ... Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ, Նաիրյան դալար բարդի՛ և այլն:

Քննությունը հիմնականում կատարել ենք նկարագրական, համեմատության, մակաձման, տեսական-հետազոտական ու գործնական-հետազոտական մեթոդներով:

### **Ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի կոչականառությունը**

Գ. Ջահուկյանը ժամանակակից հայերենի բայերը դեմքի և թվի քերականական կարգերի արտահայտության տեսանկյունից բաժանում է երկու խմբի՝ դիմասահմանափակ և անդիմասահմանափակ: Առաջին խմբի բայերը, որոնք մի քանիսն են (*ամպել, անձրևել, երեկոյանալ, լուսանալ, ձյունել (ձնել), մթնել, ցրտել*) լեզվաբանն անվանում է *միադեմ*

<sup>16</sup> Տե՛ս Գ. Խաչատրյան, Կոչականառությունը որպես բայի արժույթի արտահայտություն ժամանակակից հայերենում, էջ 10:

(միադիմի) և արժույթագուրկ եզրույթներով<sup>17</sup>: Մրանք չեզոք սեռի բայեր են և, ինչպես նշեցինք, գուրկ են կոչականառության արժույթից: Մնացած բոլոր բայերը, անկախ սեռի քերականական կարգից, անդիմասահմանափակ են, ինչպես՝ *աճեցնել, արագացնել, արթնանալ, բացվել, գրվել, խրտնել, ծեծել, կառուցվել, հարվածել, հեռանալ, սայթաքել, սողալ, վարգել, տարածել, փայլել, քանդել* և այլն: Վերջիններիս քննությունը ցույց է տալիս, որ ոչ բոլոր անդիմասահմանափակ բայերն են կոչականառու: Այսպես՝ ա) *արածել, ժայթքել, կտցել, կտցահարել, շանթահարել*, բ) *թամբվել, լծվել, կթվել, սանձվել, փետրվել* և գ) *բառաչել, եռալ, հաստանալ, շնթոել, սատկել*, համապատասխանաբար, ներգործական, կրավորական և չեզոք սեռի բայերը չեն կարող կոչական ստանալ, մինչդեռ ա) *հասկանալ, մոռանալ, ներել, սարքել, քանդել*, բ) *բացատրվել, կշռադատվել, կրկնվել, մաքրվել, շարժվել* և գ) *ամաչել, բարեվել, ծիծաղել, ճաշել, ննջել*, համապատասխանաբար, ներգործական, կրավորական և չեզոք սեռի բայերը կոչականառու են: Օրինակ՝ — Չեմ կատակում, *ա՛յ տղա*, — խիստ կտրում է Մինասյանը, — գնա, ասում եմ, էն սարի փեշը *քանդիր*՝ կառուցիր պահեստներ: *Ընկերուհի՛*, նախ քիմիական լվացքատուն գնա *մաքրվիր*, հետո եկ խոսենք: Մոտեցիր, *Նվարդ ջան, մի ամաչիր*, Սամսոնը քո եղբայրն է:

Ըստ կոչականառության արժույթի՝ ժամանակակից հայերենում առանձնանում են՝

- ա) կոչականառու բայեր,
- բ) կոչականությամբ արժույթագուրկ բայեր:

## Ա. Ժամանակակից հայերենի չեզոք սեռի կոչականառու բայեր

Ժամանակակից հայերենում կոչականառու են չեզոք սեռի այն բայերը, որոնք՝

1. կարող են կապակցվել միայն անձնանիշ առարկայի, ինչպես՝ *անսալ, ապստամբել, բանակցել, բարնել, գոչել, գոռոզանալ, երկմտել, զանգահարել, զգեստափոխվել, ըմբոստանալ, ընթրել, խորհրդակցել, համագործակցել, համաձայնել, հարստանալ, հիանալ, հիասթափվել, հիմարանալ, ճաշել, մարտնչել, մտմտալ, մտորել, նախաճաշել, նախանձել, ողջունել, սիրահարվել* և այլն: Օրինակ՝ *Արտիկ ջան, բարեիր* բոլոր տանեցիներին, հարցնողներին: *Մի բարկացիր, Ալեքս*, բայց ինձ նախ անհրաժեշտ է մայրաքաղաքում լինել: *Տեր մարզպան, բանակցո՛ւմ ես* Վարդանի հետ:

2. անձնանիշ առարկաներից բացի, կապակցվելու հնարավորություն ունեն նաև այլ դասի կամ դասերի առարկաների: Այս կարգի բայերը բաժանվում են երկու ենթախմբի<sup>18</sup>.

<sup>17</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 468:

<sup>18</sup> Տե՛ս **Գ. Խաչատրյան**, Կոչականառությունը՝ որպես բայի արժույթի արտահայտություն ժամանակակից հայերենում, էջ 15-16:

2.1. չեզոք սեռի բայեր, որոնց ցույց տված գործողությունը, կենդանանիշ ու իրանիշ թանձրացական և/կամ վերացական գոյականներից բացի, կարելի է վերագրել նաև անձնանիշ գոյականներին, ինչպես *ակտիվանալ, աղմկել, աճել, անհետանալ, ավելանալ, բազմանալ, ընկնել, թռչել, կորչել, հեռանալ, մնալ, մոտենալ, նվազել, շատանալ, պակասել, քչանալ* և այլն: Օրինակ՝ *Մի՛ աղմկեք, տղերք*, քարերով ու մահակներով հեղափոխություն չեք անի: Դու, *պստիկ սատանա, կորիք աչքիցս* և էլ դպրոցում չերևաս: *Ճուտտ՛, թռիք* Կաուչուկի ժողդատաբան ու հանձնիր այս գործերը և այլն:

2.2. չեզոք սեռի բայեր, որոնց ցույց տված գործողությունը կարելի է վերագրել ոչ միայն կենդանանիշ, այլև անձնանիշ գոյականների, ինչպես՝ *արթնանալ, գեղեցկանալ, գիրանալ, գայրանալ, խլանալ, ծերանալ, կանգնել, կուրանալ, դժժալ, ճղճղալ, ճչալ, ճվճվալ, մոթմոթալ, շշմել, սողալ, վազել, քնել* և այլն: Օրինակ՝ *Սերո՛ք*, դու *վազիր* գյուղ և կոլխոզի նախագահին ասա՝ Տադե պապին մեռավ ...: *Քնի՛ր, քնի՛ր, կապո՛ւյտ աղջիկ*, չգարթնես ծեգին: *Մի գայրանա*, հայրիկ, առաջին անգամ ենք այս մասին խոսում, և ես ուզում եմ բացել միտքս ու հոգիս և այլն:

Ինչպես տեսնում ենք, որպեսզի որևէ բայ կարողանա կապակցվել այս կամ այն կոչականին, անպայման պետք է օժտված լինի կամ միայն անձնանիշ, կամ նաև անձնանիշ առարկաների կապակցվելու հնարավորությամբ:

Կոչականառու բայերի մեծագույն մասը (*աջակցել, գոչել, երթնել, գարմանալ, ընդդիմախոսել, լկտիանալ, խենթանալ, խնամիանալ, կասկածել, հարստանալ, մասնագիտանալ, մարտնչել, մենամարտել, նվազակցել, ողջունել, պայքարել* և այլն) կարող է ստանալ թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվով կոչական: Հմմտ. *Մառո՛ղ*, բարձրախոհ դու եղիր, *պայքարի՛ր* դարիդ առընթեր, Բայց քնքշությունըդ երբե՛ք քեզ առաջնորդ չկարգես և *Տղե՛րք ջան*, ձեր հոգո՛ւն մատաղ, *պայքարե՛ք*, բայց անձնավորության մի՛ կայչեք:

Կոչականառու սակավաթիվ չեզոք բայեր (*խոնվել, կանգնտել, համագոյակցել, համագարկել, համաթնել, համաճել, հարքոտել, միաձայնել, նստոտել, պատկոտել, վխտալ* և այլն) պահանջում են հոգնակի կամ բազմակի կոչականներ: Օրինակ՝ Բարի մարդիկ, *մի՛ խոնվեք*....:

Առանձնանում են նաև միայն եզակի թվով արտահայտված կոչականառու չեզոք բայեր, ինչպես *մենախոսել, մենականալ, մենանալ, մենասահել, միայնանալ, մեներգել* և այլն, որոնք նույնպես փոքրաթիվ են և սակավադեպ: Օրինակ՝ .... *պարո՛ն*, ուղղակի *մենախոսի՛ր* ....<sup>19</sup>:

Թեև նշել ենք, որ անձնանիշ առարկաներին կապակցվող չեզոք սեռի բայերը կոչականառության տեսանկյունից անսահմանափակ են, սակայն նկատենք, որ նշված խմբին պատկանող մի շարք բայերի դեպ-

<sup>19</sup> Քաղված է համացանցից ([https://m.facebook.com/permalink.php?id=105799734233706&story\\_fbid=165694218244257](https://m.facebook.com/permalink.php?id=105799734233706&story_fbid=165694218244257)):

քում կոչականառությունը արհեստական բնույթի է: Այդ բայերից են՝ *բանվորականանալ, բանվորանալ, գերիանալ, թագավորանալ, իսլամականանալ, խոհարարել, կաթողիկոսանալ, ձիախաղալ, մեծմայրանալ, ոստիկանել, պահականալ, պարոնանալ, ուսուցագործել*, և այլն:

**Բ. Ժամանակակից հայերենի՝ կոչականությամբ արժույթագուրկ չեզոք սեռի բայեր**

Ժամանակակից հայերենում կոչականառության արժույթից գուրկ են չեզոք սեռի այն բայերը, որոնք՝

1. կապակցվում են միայն կենդանանիշ առարկաների, ինչպես՝ *բզզալ, բնավորվել, գառնատել, դայլայլել, երամանալ, թխսել, թնաբախել, թնագարկել, թնածել, թնել, խրխնջալ, կաղկանձել, հաչել, ճովողել, մակաղել, մլավել, մկկալ, շնթոել, ոռնալ, որջանալ, որջավորվել, չվել, պարսավորվել, սատկել, սատկոտել, ստերջանալ, վարգել, վնգստալ, տրտնգալ, փետրակալել, քառասմբակել* և այլն,

2. կապակցվում են միայն իրանիշ առարկաների, ինչպես՝ *ածականանալ, ամպրոպանալ, ամրանալ, անալիանալ, անապատանալ, արմատակալել, բայանալ, բողբոջել, գոյականանալ, դալարել, դաշտանալ, դրդալ, եռալ, երկաթանալ, թթվել, ծաղկել, կանաչել, հոգնակիանալ, դողանջել, ճյուղարձակել, մագաղաթանալ, մթագունել, ոստակալել, պահածոյանալ, սաստկանալ, սոսափել, վարդանալ, օձառանալ, ֆոսֆորանալ* և այլն.

3. կապակցվում են իրանիշ և կենդանանիշ առարկաների, ինչպես՝ *ճախրել, սավառնել* և այլն

**Եզրակացություններ:** Ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի կապակցելիական հնարավորությունների ուսումնասիրությունից հանգել ենք մի շարք եզրակացությունների: Կոչականառությունը արժույթի դրսևորումներից մեկն է և հատուկ է միայն բայերին: Կոչականառությամբ օժտված են թե՛ ներգործական, թե՛ կրավորական և թե՛ չեզոք սեռի բազմաթիվ բայեր: Կոչականառությունն իրականացվում է միայն ուղղակիորեն մեջբերվող խոսքերում: Կոչականառու բայերը կոչականին կապակցվում են համաձայնության եղանակով. տեղի է ունենում մասնակի համաձայնություն թվի քերականական կարգով:

Կոչական կարող են ստանալ տարբեր դասային խմբերի հետ կապակցման հնարավորություն ունեցող չեզոք սեռի բայեր, մասնավորապես նրանք, որոնք առանձնանում են անդիմասահմանափակությամբ: Մակայն պետք է նկատել, որ ոչ բոլոր անդիմասահմանափակ չեզոք բայերն են կոչականառու: Կոչականառությամբ օժտված անդիմասահմանափակ բայերը կապակցման ընթացքում հանդես են բերում դիմային սահմանափակություն. նրանք կոչական են առնում ոչ թե բոլոր, այլ միայն եզակի և հոգնակի թվերի 2-րդ դիմային ձևերով:

Կոչականառությունը հիմնականում հատուկ է անձնանիշ առար-



կաներին կապակցվելու հնարավորություն ունեցող չեզոք սեռի բայերին: Կոչական կարող են ստանալ նաև տարբեր դասային խմբեր ներկայացնող առարկաներին վերաբերող այն բայերը, որոնք, այլ առարկաներից բացի, առանձնանում են նաև անձ ցույց տվող առարկաներին կապակցվելու հնարավորությամբ: Չեզոք սեռի բայերի մեծ մասը կարող է կապակցվել թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվով կոչականի, և միայն սահմանափակ թվով բայեր են, որ ստանում են կա՛մ միայն եզակի, կա՛մ միայն հոգնակի թվով կոչական: Մի շարք անձնանիշ առարկաների կապակցվող չեզոք սեռի բայերի կոչականատությունը բնորոշ չէ ժամանակակից հայերենին:

Կոչականատությամբ արժույթագուրկ են միայն կենդանանիշ և միայն թանձրացական կամ վերացական իրանիշ առարկաներին կապակցվող չեզոք սեռի բայերը, ինչպես նաև նրանք, որոնք կարող են կապակցվել իրանիշ և կենդանանիշ առարկաների: Նշված բայերը կոչականին կարող են կապակցվել անձնավորման կամ փոխաբերական կիրառության դեպքում:

Ուսումնասիրությունը հնարավորություն կտա առավել ամբողջական պատկերացում կազմելու ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի կապակցելիական հնարավորությունների, այսինքն՝ արժույթի մասին:

**ГУРГЕН ХАЧАТРЯН, ЛАЛА ГРКИКЯН – *Способность переходных глаголов принимать обращение в современном армянском языке.*** – В статье исследуются сочетаемостные возможности переходных глаголов современного армянского языка.

Изучение сочетаемостных возможностей переходных глаголов современного армянского языка показывает, что помимо подлежащего, предикатива, дополнения и обстоятельства, этим глаголам свойственно также сочетание с обращением, выражение валентности которого проявляется только в составе предложения. Дело в том, что способность глагола принимать обращение непосредственно связана с грамматическим актом предикативности. Обращение принимают только личные глаголы или же это происходит с их обязательным участием и только в прямой речи. Но не все переходные глаголы принимают обращение. Существенную роль в этом играет тот факт, к какому классу слов, обозначающих предмет, может относиться действие, выраженное тем или иным глаголом.

Обращение могут принимать только личные переходные глаголы, однако способность принимать обращение свойственна тем переходным глаголам, которые в основном сочетаются с существительными, обозначающими лицо. Большая часть последних может сочетаться с обращением как в единственном, так и во множественном числе, и только ограниченное количество глаголов принимает обращение или только в единственном, или только во множественном числе. Личные глаголы, принимающие обращение, имеют ограниченную сочетаемость: принимают обращение не все формы этих глаголов, а только формы 2-го лица единственного и множественного числа.

Целью данного исследования является изучение валентности переходных глаголов современного армянского языка, принимающих обращение. Это до сих пор не исследовалось. Исследование даст возможность сформировать более полное представление о сочетаемостных возможностях переходных глаголов со-

временного армянского языка, т.е. их валентности, чем и обусловлена актуальность нашего исследования.

**Ключевые слова:** валентность, непереходные глаголы, согласование, глагол, сочетаемые с существительными, обозначающими лицо (предмет, животное), сочетаемость

**GURGEN KHACHATRYAN, LALA GRKIKYAN – *Direct Address Valence of Intransitive Verbs in Modern Armenian.*** – The article explores the compatibility possibilities of intransitive verbs in the Modern Armenian language.

The study of the compatibility possibilities of intransitive verbs of Modern Armenian shows that in addition to subject, predicative, object and adverbial modifier, these verbs also combine with direct address, the expression of the valence of which is manifested only in the sentence. The fact is that the ability of a verb to accept direct address is directly related to the grammatical act of predicativity. Only finite verbs can take direct address, or this happens with their obligatory participation and only in direct speech. But not all intransitive verbs accept direct address. An essential role in this is played by the fact to which class of words denoting an object the action expressed by this or that verb can belong.

Only personal intransitive verbs can take direct address, however, the ability to accept direct address is characteristic of those intransitive verbs that are mainly combined with nouns denoting a person. Most of the latter can be combined with direct address both the singular and the plural, and only a limited number of the verbs accept the direct address either only in the singular or only in the plural. Personal verbs that accept direct address have limited compatibility: not all forms of these verbs accept direct address, but only the forms of the 2nd person singular and plural.

The purpose of this research is to study the vocative valence of intransitive verbs in Modern Armenian, the topic that has not yet been explored. The study will provide an opportunity to form a more complete picture of the compatibility possibilities, i.e. the valence of intransitive verbs in the Modern Armenian language, which determines the relevance of our study.

**Key words:** valence, intransitive verbs, agreement, verbs combining with nouns denoting a person (an object, an animal), compatibility